Դ. Կիւրակէին դարձեալ խօսեց Նորին Վեհափառութիւնը. Հին օրինաց պատուէրներով, մեծատան և աղքատ Ղազարոսի, ինչպէս նաև Յայտնութիւնքի մէջ յիշուած անողորմ Պետրոսի օրինակներով ու ժողովրդական ասացուածներով պատկերացրեց ողորմածութեան, իրրև ամենամեծ առաքինութեան, խնամութիւնը, յիշեցրեց վերջին դատաստանի վճիռը, որով ահեղ Դատաւորը ողորմածներին է միայն հրաւիրում. «Եկա՛յք, օրհնեա՛լք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի. զի քաղցեայ, և եատուք ինձ ուտել...»: — Ունկնդիրները հեռացան տաճարից այն տպաւորութեամբ, որ անզուգական Քարոզիչը՝ թէպէտ ծերութեան ալեաց և վշտալի հոգոց ծանրութեան ներքոյ ճնշուած, դեռ կենդանի է պահել տասնեակ տարիներէ ի վեր Իւր ժողովրդի սրտի և հոգու հետ խօսող Իւր ճարտար լեզուի բոլոր զօրութիւնը:

Դ. Կիւրակէն խօսեց Դեր. Մակար սրբազանը սրտի և հոգւոյ մաքրութեան մասին, Նրուսաղէմի տաճարի օրինակով բացատրելով, թէ ինչպէս Աստուած միայն սուրբ տեղ բնակել կարող է. և ուրեմն մեր սիրտն այն ժամանակ Նորա համար բնակարան կը լինի, երբ մաքրուած է ամեն տեսակ ամբարիշտ մաքերից և աղտեղի զգացումներից:

Վեհափառ Հայրապետի հրամանաւ Վաղարշապատի գիւղի եկեղեցում քարոզում են վարդապետները. արդէն խօսեցին Տ. Տ. Կարապետ, Նղիա և Սահակ:

Վեհափառ Հայրապետը ս. Էջմիածնի գաւառի գիւղական ժողովրդեան հոգևոր կարօտը լցուցանելու համար, բարեհաճեց Կոնդակաւ նշանակել Տ. Կորիւն վարդապետին քարոզելու Մեծի պահոցս ընթացքում: Բարեշն. Հայր Կորիւնը եռանդով կատարում է այդ դեղեցիկ գործը:

Ամսոյս 7-ին Ս. Սինոդում տուին հպատակութեան երդում Մայր Աթոռի երեք միաբան. (նախկին տաճկահպատակ) Տ. Գէորգ Որշունի, Թովմա Բաղդասարեան և Կորիւն Սահակեան վարդապետները. երդուեցնողն էր Տ. Խաչիկ վարդապետը:

Մայր Աթոռի Վանական կառավարութեան անդամներից Դեր. Տ. Անանիա եպիսկոպոսն անձնական տկարութեան պատճառաւ հրաժարական մատոյց, որ և ընդունուեց Վեհ. Հայրապետի կողմից:

Վեհափառ Հայրապետի հրամանաւ ամսոյս 23-ին Դեր. Մակար եպիսկոպոսը Վաղարշապատի եկեղեցում արեգակութեան աստիճան տուեց Մայր Աթոռոյս միաբան Շնորհ. Բագրատ սարկաւագ Մատթէոսեանին, վերակոչելով Մատթէոս. Նորա հետ ձեռնադրուեցան նաև երեք քահանայ, որոնցից մէկը Գէորգեան ճեմարանի դպրոցական մասի ընթացաւարտ է:

Ամսոյս 22-ին ճաշից յետոյ Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ Երևան գնալ մի քանի կարևոր առաջնորդական և դպրոցական գործեր կարգադրելու համար:

Հետևեալ օրը կիւրակէ երեկոյեան Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ Նորին Օծութիւնը հոծ բազմութեան ներկայութեամբ խիստ ազդու մի քարոզ խօսեց, բացատրելով անիրաւ դատաւորի, փարիսեցու և մաքսաւորի առակներով աղօթքի ոյժը և նշանակութիւնը:

Երկուշաբթի երեկոյեան Նորին Սրբութիւնը ողջմամբ վերադարձաւ Մ. Աթոռս:

Ամսոյս 23-ին ճեմարանի վարչութիւնը ս. Պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգ կատարել տուեց ի յիշատակ ճեմարանի նախկին տեսչի և ուսուցչի, հանգուցեալ Նիկողայոս Մոսրովեանի: Բարեշ. Տ. Կարապետ վարդապետը մի պատշաճաւոր դամբանական խօսեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

1. Լօնդոնի ս. Յովհաննու եկեղեցւոյ մէջ խօսուած Թորոս քահ. Զուղայեցու Քարոզը. . . . 97
2. Արեգ ամիս . . Ղ. Ղ. . . 102
3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 111

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

4. Մատենախօսութիւն . . . Գրասէր . . 116
5. Ս. Լուսաւորիչ եւ Տրդատ եւ նորա Նոր շարականները. . . . Ս. Վ. Ամատունի . 121

ԱԶԳԱՅԻՆ

12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ 8
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՑԱՒԵԼՈՒԱԾ. Անանիա Մոկացի, Գ. Տ. Մկրտչեան.
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.